



Համայնքների ֆինանսիստների  
միավորում  
CFOA



Բաց հասարակության ինստիտուտի  
աջակցության հիմնադրամ –Հայաստան  
OSI-AF / Armenia

**ՆԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ  
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
(ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2010 – 2011թթ.  
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Երևան 2012

Սույն մեթոդաբանական ձեռնարկը մշակվել է «Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի» Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ կողմից իրականացվող «Երևան քաղաքի բյուջեի մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի ղեկավար՝

**Վահան Մովսիսյան,** «Համայնքների ֆինանսիստների միավորում»  
ՀԿ նախագահ

Ծրագրի փորձագետ՝

**Վահրամ Շահբազյան,** «Համայնքների ֆինանսիստների միավորում»  
ՀԿ վարչության անդամ, տեխնիկական գիտությունների  
թեկնածու

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)  
ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ 2010 և 2011թթ. ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - Եր., Նոյյան տապան, 2012, 44 էջ:**

Սույն մեթոդաբանական ձեռնարկը նվիրված է՝ ՀՀ համայնքի բյուջետային գործընթացի և բյուջեի նկատմամբ մոնիթորինգի իրականացման մեթոդաբանության մշակման, կիրառման, եզրակացությունների հանգման և առաջարկությունների ներկայացման հարցերին: Մշակված մեթոդաբանությունը կիրառվել է Երևան քաղաքի 2010 և 2011թթ. բյուջեների նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու համար, որի արդյունքում կատարվել են մի շարք եզրակացություններ և առաջարկություններ Երևան քաղաքի բյուջետային գործընթացի բարելավման վերաբերյալ:

Ձեռնարկը հասցեագրված է ՀՀ քաղաքացիներին, համայնքներում գործող քաղաքացիական հասարակության հատվածի սուբյեկտներին: Ձեռնարկը կարող է որոշակի հետաքրքրություն ներկայացնել նաև համայնքների ավագանիների, համայնքների ղեկավարների և նրանց աշխատակազմերի հանրության հետ կապերի, ֆինանսական կառավարման և այլ բնագավառների մասնագետների, ինչպես նաև ուսանողների, դասախոսների, քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման հարցերով զբաղվող մասնագետների համար:

Ձեռնարկը հրատարակվել է «Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի» Հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ: Ձեռնարկում ներկայացվածը հեղինակների տեսակետներն են և միշտ չէ, որ դրանք արտահայտում են «Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի» տեսակետները:

ISBN

© «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ, 2012

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| Ներածություն   | 5  |
| 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  | 7  |
| Քայլ 1. Տեղեկացում համայնքի ղեկավարին  | 8  |
| Քայլ 2. Հանդիպումների կազմակերպում, բանակցությունների վարում<br>և պայմանավորվածությունների ձեռքբերում  | 8  |
| Քայլ 3. Համայնքի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության<br>հայթայթում և ծանոթացում  | 9  |
| Քայլ 4. Գործող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի<br>ուսումնասիրում և վերլուծում  | 9  |
| Քայլ 5. Բյուջեի ծրագրային հիմքերի ուսումնասիրում և վերլուծում  | 11 |
| Քայլ 6. Համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման<br>օրենսդրական պահանջների ուսումնասիրում և դրա մոնիթորինգի<br>իրականացման փուլերի առանձնացում | 12 |
| Քայլ 7. Համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման<br>վերաբերյալ ՏԻՄ-երի իրավական ակտերի, բյուջետային<br>փաստաթղթերի ձեռքբերում և ուսումնասիրում | 14 |
| Քայլ 8. Համայնքի բյուջետային գործընթացի մոնիթորինգի<br>իրականացում և արդյունքների ստացում՝ ըստ առանձին փուլերի                                     | 16 |
| Բյուջեի կազմում, քննարկում և հաստատում   | 16 |
| Բյուջեի կատարում   | 17 |
| Բյուջեի կատարման հսկողություն և վերահսկողություն   | 19 |
| Բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների կազմում,<br>քննարկում և հաստատում   | 20 |
| Բյուջեի թափանցիկությունը և հրապարակայնությունը   | 21 |
| Քայլ 9. Համայնքի բյուջետային տվյալների շտեմարանի ստեղծում,<br>օգտագործում և թարմացում, համայնքի ֆինանսական ցուցանիշների<br>սահմանում               | 22 |
| Քայլ 10. Համայնքի ֆինանսական վերլուծության իրականացում,<br>եզրակացությունների հանգում և առաջարկությունների մշակում                                 | 24 |
| Ընդհանուր ֆինանսական ցուցանիշների գնահատում  | 25 |
| Եկամտային ցուցանիշների գնահատում   | 25 |
| Ծախսային ցուցանիշների գնահատում  | 26 |

|  |    |
|--|----|
| Բյուջետային եկամուտների և ծախսերի հավասարակշռման<br>ցուցանիշների գնահատում . . . . .                                 | 27 |
| Քայլ 11. Համայնքի բյուջեի մոնիթորինգի իրականացման<br>վերաբերյալ փաստաթղթի մշակում, քննարկում և հրատարակում . . . . . | 27 |
| 2. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2010 և 2011թթ. ԲՅՈՒՋԵՆԵՐԻ<br>ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ . . . . .                                     | 29 |
| 2.1. Երևանի բյուջեի մոնիթորինգի իրականացման իրավական<br>և ծրագրային հիմքերը . . . . .                                | 29 |
| 2.2. Երևանի բյուջետային գործընթացի մոնիթորինգի<br>իրականացումից ստացված արդյունքները . . . . .                       | 31 |
| 2.3. Երևանի 2009-2010թթ. ֆինանսական վերլուծության<br>արդյունքները . . . . .  | 39 |
| Օգտագործված գրականության ցանկ . . . . .  | 43 |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի<sup>1</sup> ներածությունում ամրագրված է, որ պետական գործերի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը դասվում է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար ընդհանուր ժողովրդավարական սկզբունքների շարքին: Այդ իրավունքն անմիջականորեն կարող է իրականացվել հենց տեղական մակարդակում, իրական իշխանությամբ օժտված տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) կողմից: Նույն փաստաթղթի 3-րդ հոդվածում նաև ամրագրված է, որ տեղական ինքնակառավարման իրավունքն իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից, որոնք կարող են ունենալ իրենց հաշվետու գործադիր մարմինները՝ չբացառելով քաղաքացիների ժողովների, հանրահավաքների կամ ուղղակի մասնակցության ցանկացած այլ ձևի կիրառումը, եթե դա թույլատրված է օրենքով:

ՀՀ համայնքում տեղական ինքնակառավարման իրականացումը հիմնվում է ՀՀ Սահմանադրության 7-րդ գլխով ամրագրված դրույթների և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների վրա<sup>2</sup>:

Քաղաքացիների և/կամ նրանց կողմից ձևավորված ֆորմալ ու ոչ ֆորմալ խմբերի կողմից ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման ձևերից կամ միջոցներից մեկը համայնքի բյուջեի կամ բյուջետային գործընթացի նկատմամբ դիտարկումների (մոնիթորինգի) կազմակերպումն ու իրականացումն է: Սույն ձեռնարկը կազմվել է Բաց հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ կողմից իրականացվող «Երևան քաղաքի բյուջեի մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում, այն նվիրված է համայնքի (Երևան քաղաքի օրինակով) բյուջետային գործընթացի և բյուջեի նկատմամբ մոնիթորինգի իրականացման մեթոդաբանության մշակմանը և, դրա կիրառման արդյունքում, որոշակի եզրակացությունների հանգմանը և առաջարկությունների ներկայացմանը:

Հիմնվելով համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման ՀՀ գործող օրենսդրության պահանջների վրա, մանրամասն ուսումնասիրվել և վերլուծվել են Երևան քաղաքի 2010-2011թթ. բյուջետային գործընթացները,

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետությունը «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա» փաստաթուղթը ստորագրել է 2001թ. մայիսի 11-ին և վավերացրել է 2002թ. հունվարի 25-ին

<sup>2</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 9

ինչպես նաև կատարվել է հակիրճ ֆինանսական վերլուծություն՝ օգտագործելով Երևանի 2009-2011թթ. բյուջետային տվյալները: Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում, մշակվել է համայնքի բյուջեի մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը, որի կիրառմամբ Երևանի բյուջեի նկատմամբ, կատարվել են մի շարք եզրակացություններ՝ ցույց տալով Երևանի բյուջետային գործընթացի կազմակերպման և բյուջեի կառավարման ինչպես ձեռքբերումները և նվաճումները, այնպես էլ առկա խնդիրները, բացթողումները և թերությունները: Վերջիններիս վերաբերյալ ձեռնարկի հեղինակների կողմից արվել են մի շարք առաջարկություններ՝ Երևանի ՏԻՄ-երի և քաղաքապետարանի աշխատակազմի ուշադրությունը հրավիրելով առկա խնդիրների և դրանց լուծման ուղիների վրա:

# 1. ՆԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՅ- ՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տեղական ինքնակառավարման համակարգում առանձին վերցրած համայնքի բյուջեի մոնիթորինգ իրականացնելու համար, նախ, պետք է մշակել և գործողության մեջ դնել համապատասխան **մեթոդաբանություն**: Ընդհանուր առմամբ, այդպիսի մեթոդաբանության մշակման և արդյունավետ կիրառության համար, այն պետք է լինի հնարավորինս պարզ ու մատչելի և հիմնված լինի հիմնականում հետևյալ գործողությունների կամ քայլերի պլանավորման և հետևողական կատարման վրա՝

- ◆ համայնքի բյուջեի մոնիթորինգի իրականացման մասին տեղեկացում համայնքի ղեկավարին՝ համապատասխան պաշտոնական գրություն ուղարկելու միջոցով,
- ◆ համայնքի ղեկավարի, ավագանու անդամների և պատասխանատու այլ պաշտոնյաների հետ հանդիպումների կազմակերպում, բանակցությունների վարում և համապատասխան պայմանավորվածությունների ձեռքբերում,
- ◆ համայնքի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության հայթայթում և համայնքի հետ ծանոթացում,
- ◆ տեղական ինքնակառավարման համակարգի գործող օրենսդրական դաշտի և ՏԻՄ-երի գործունեության ենթաօրենսդրական հիմքերի վերհանում, մանրակրկիտ ուսումնասիրում և վերլուծում,
- ◆ համայնքի բյուջեի մոնիթորինգի իրականացման ծրագրային հիմքերի ձեռքբերում, ուսումնասիրում և վերլուծում,
- ◆ համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման օրենսդրական պահանջների ուսումնասիրում և բյուջետային գործընթացի մոնիթորինգի փուլերի առանձնացում,
- ◆ համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման վերաբերյալ ՏԻՄ-երի իրավական ակտերի, բյուջետային փաստաթղթերի ձեռքբերում և ուսումնասիրում,
- ◆ համայնքի բյուջետային գործընթացի մոնիթորինգի իրականացում և արդյունքների ստացում՝ ըստ առանձին փուլերի,
- ◆ համայնքի բյուջետային տվյալների շտեմարանի ստեղծում, օգտագործում և թարմացում, համայնքի ֆինանսական ցուցանիշների սահմանում (ընտրություն),
- ◆ համայնքի ֆինանսական վերլուծության իրականացում, եզրակացու-

- ♦ բյույնների հանգում և առաջարկությունների մշակում, համայնքի բյուջեի մոնիթորինգի իրականացման վերաբերյալ փաստաթղթի մշակում, քննարկում և հրատարակում:

### ***Քայլ 1. Տեղեկացում համայնքի ղեկավարին***

Առաջին քայլը, որ պետք է կատարեն համայնքի բյուջեի մոնիթորինգ իրականացնող քաղաքացիական հասարակության խմբերը, այդ մասին համայնքի ղեկավարին պաշտոնական գրությամբ տեղեկացնելն է: Դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ բյուջեի մոնիթորինգ իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ բավականին մեծ ծավալի համապատասխան տեղեկատվություն, ինչպես նաև ՏԻՄ-երի կողմից ընդունված մի շարք որոշումներ ու փաստաթղթեր: Իհարկե, ներկայումս Հայաստանում կան համայնքներ, որոնք ստեղծել են իրենց պաշտոնական ինտերնետային կայքերը: Սակայն, այդ կայքերում առկա տեղեկատվությունը բավարար պատկերացում չի տալիս համայնքների մասին, ՏԻՄ-երի ոչ բոլոր որոշումներն ու փաստաթղթերն են հասանելի: Այդ պատճառով առկա տեղեկատվությունն ավելի շուտ ծանոթագրական բնույթ ունի, ամբողջական ու բավարար չէ հետազոտական աշխատանք կատարելու համար և հաճախ կարիք է լինում դիմելու տեղական իշխանությունների միջամտությանը և օգնությանը: Դրա հետ մեկտեղ, ՀՀ համայնքների մեծ մասը դեռևս չունեն իրենց պաշտոնական ինտերնետային կայքերը, որի պատճառով տեղեկատվության ստացման միակ աղբյուրը հանդիսանում են ՏԻՄ-երը, համայնքի ղեկավարի աշխատակազմը և նրան ենթակա կազմակերպությունները:

### ***Քայլ 2. Կանոնադրությունների կազմակերպում, բանակցությունների վարում և պայմանավորվածությունների ձեռքբերում***

Համայնքի բյուջեի մոնիթորինգ իրականացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալով՝ կազմակերպիչները պետք է նախապատրաստեն և անցկացնեն հանդիպումներ համայնքի ՏԻՄ-երի, պաշտոնատար այն անձանց հետ, որոնք անմիջական առնչություն համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման հետ և/կամ որոշակի դերակատարություն ունեն բյուջեի կառավարման գործում: Այդ հանդիպումների ժամանակ վարվում են նպատակամետ բանակցություններ և ձեռք են բերվում որոշակի պայմանավորվածություններ՝ համայնքի բյուջեի մոնիթորինգ իրականացնելու համար կատարվելիք գործողությունների ու միջոցառումների շուրջ: Վերջիններիս թվին են դասվում բյուջեի մոնիթորինգ իրականացնող կազմակերպությունների/խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը համայնքի բյու-



ջետային գործընթացի շուրջ համայնքի ավագանու և նրա կազմում ձևավորված հանձնաժողովների նիստերին, համայնքի ղեկավարի մոտ անցկացվող խորհրդակցություններին ու քննարկումներին, համայնքում կազմակերպվող հանրային լսումներին ու քննարկումներին, համայնքի մասին տեղեկատվության, ՏԻՄ-երի որոշումների ու համայնքին վերաբերվող այլ փաստաթղթերի տրամադրումը, քաղաքացիների ու համապատասխան պաշտոնյաների հետ հարցազրույցների վարումը և այլն:

### ***Քայլ 3. Նամայնքի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության հայթայթում և ծանոթացում***

Համայնքի բյուջեի մոնիթորինգ իրականացնող կազմակերպություններին/խմբերին հաջորդ քայլը համայնքի մասին ընդհանուր տեղեկատվության ձեռքբերումն ու համայնքի հետ հնարավորինս մոտիկից ծանոթացումն է: Համայնքի մասին ընդհանուր տեղեկատվությունն իր մեջ կարող է ներառել համայնքի աշխարհագրական դիրքը, համայնքի մասին պատմական տվյալները, համայնքի բնակլիմայական պայմանները, ժողովրդագրական տվյալները և բնակչության սոցիալական կազմը, համայնքի մարդկային, հումքային, նյութական, արտադրական և այլ ռեսուրսները, տվյալներ համայնքում գործող արտադրական (արդյունաբերական, գյուղատնտեսական) ու առևտրային ձեռնարկությունների հզորությունների, արտադրատեսակների, աշխատատեղերի քանակի և այլնի մասին, համառոտ տեղեկատվություն պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, հասարակական ու մասնավոր հատվածի սուբյեկտների գործունեության ուղղությունների մասին, համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների վիճակը, համայնքի հիմնախնդիրները, ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները, ՏԻՄ-երի կառուցվածքը, համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների գործունեության ոլորտներն ու մատուցած ծառայությունների տեսակները և այլն: Մի խոսքով, համայնքի մասին ընդհանուր տեղեկատվության հիման վրա կարելի է նախնական պատկերացում կազմել ինչպես ընդհանրապես համայնքի մասին, այնպես էլ, մասնավորապես, համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի, հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ:

### ***Քայլ 4. Գործող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի ուսումնասիրում և վերլուծում***

Համայնքի բյուջեի արդյունավետ մոնիթորինգ իրականացնելու համար պետք է գոնե ընդհանուր գծերով ծանոթ լինել տեղական ինքնակառավարման

համակարգում գործող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտին: Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման իրականացումը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով<sup>3</sup>, այլ օրենքներով և իրավական ակտերով: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով<sup>4</sup>: Այդպիսով, Երևան համայնքում տեղական ինքնակառավարման իրականացումը, չնայած տեղական ինքնակառավարման ընդհանուր սկզբունքներին և այլ նմանություններին, զգալիորեն տարբերվում է ՀՀ մյուս բոլոր համայնքներում տեղական ինքնակառավարման իրականացումից, և դա իր որոշակի ազդեցությունն է թողնում Երևան քաղաքի և ՀՀ մյուս բոլոր համայնքների բյուջեների մոնիթորինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանություն մշակելու և այն կիրառելու աշխատանքների վրա: Այդուհանդերձ, մենք կփորձենք այդ մեթոդաբանությունը ներկայացնել հնարավորինս ընդհանուր գծերով՝ անհրաժեշտության դեպքում մատնանշելով Երևան քաղաքի առանձնահատկությունները:

Համայնքում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմինը համայնքի ավագանին է և պետք է հստակ պատկերացում ունենալ ավագանու իրավասությունների և գործունեության մասին, մասնավորապես, տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության և համայնքի բյուջետային գործընթացի կառավարման բնագավառներում: Համայնքի ավագանին իր գործունեությունը կազմակերպում է օրենքին և իր իսկ կողմից ընդունված իր կանոնակարգին համապատասխան՝ հերթական և արտահերթ նիստերի, մշտական գործող և/կամ ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:

Համայնքի ղեկավարն օրենքով ամրագրված իր իրավասությունների սահմաններում ընդունում է որոշումներ, արձակում կարգադրություններ:

Ուշադրության արժանի է Երևանի քաղաքապետի այն լիազորությունը, որ նա ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում հանրությանը ավագանու, իր գործունեության և Երևանի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Նկատենք, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նմանատիպ դրույթ սահմանված չէ: Երևանի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ քաղաքապետի որոշ լիազորություններ օրենքով տրված են Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

<sup>3</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2002թ. մայիսի 7-ին

<sup>4</sup> «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2008թ. դեկտեմբերի 26-ին

Համայնքի բյուջեի մոնիթորինգ իրականացնող կազմակերպությունները/խմբերը պետք է մանրամասն ուսումնասիրեն և վերլուծեն համայնքի ավագանու կանոնակարգը, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը, ինչպես նաև ավագանու որոշումների նախագծերի ներկայացման, քննարկման, ընդունման ու հրապարակման կարգերը:

Համայնքի ավագանին և ղեկավարն իրենց գործունեությունը կազմակերպում են համայնքի ղեկավարի աշխատակազմի միջոցով՝ իրականացնելով օրենքով նրանց վերապահված լիազորությունները և համակարգելով համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը:

Համայնքի բյուջեի մոնիթորինգ իրականացնող կազմակերպությունները/խմբերը պետք է մանրամասն ուսումնասիրեն և վերլուծեն համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատող ՏԻՄ-երի համապատասխան իրավական ակտերը: Պետք է նկատի ունենալ, որ այդ իրավական ակտերում պարբերաբար կատարվում են փոփոխություններ և լրացումներ՝ որոնք նույնպես ուսումնասիրման և վերլուծման կարիք ունեն: Անհրաժեշտության դեպքում, պետք է ուսումնասիրել և վերլուծել նաև ՏԻՄ-երի կողմից ընդունված այլ որոշումներ ու կարգադրություններ, որոնք անմիջական առնչություն ունեն բյուջեի մոնիթորինգի իրականացման աշխատանքների հետ, մասնավորապես՝ գույքի կառավարման, գումարների, ներդրումային ծրագրերի, վարկավորման, հաշվապահական հաշվառման, վերահսկողության, հրապարակայնության և այլ բնագավառներում:

### ***Քայլ 5. Բյուջեի ծրագրային հիմքերի ուսումնասիրում և վերլուծում***

Համայնքի բյուջեի ձևավորման հիմնական սկզբունքներից մեկը վերաբերում է համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիման վրա համայնքի ֆինանսական միջոցների պլանավորմանը: Հետևաբար, բյուջեի մոնիթորինգ իրականացնողները պետք է մանրամասն ուսումնասիրեն և վերլուծեն համայնքի զարգացման գործող քառամյա ծրագիրը, որը հնարավորություն կտա ծանոթանալու ինչպես համայնքի սոցիալ-տնտեսական վիճակին և առկա հիմնախնդիրներին, այնպես էլ ՏԻՄ-երի որդեգրած քաղաքականությանը և մշակված ռազմավարություններին ու ծրագրերին: Օրինակ, Երևան քաղաքի զար-

զացման 2010-2013թթ. քառամյա ծրագիրը ներառում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը և զարգացման հիմնական ուղղությունները, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները, Երևանի վարչական շրջանների զարգացման քառամյա ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները:

Ի տարբերություն այլ համայնքների, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է նաև համայնքի զարգացման միամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերի մշակում, ընդունում և իրականացում:

***Քայլ 6. Նամայնքի բյուջեային գործընթացի կազմակերպման օրենսդրական պահանջների ուսումնասիրում և դրա մոնիթորինգի իրականացման փուլերի առանձնացում***

Համայնքի բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր տարվա բյուջեն կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրա կատարման տարեկան հաշվետվությունները կազմելու, քննարկելու և հաստատելու ուղղությամբ ՏԻՄ-երի՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է:

Համայնքում բյուջետային գործընթացն իրականացվում է՝ ելնելով ՏԻՄ-երի գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի դրույթներից և պահանջներից: ՀՀ սահմանադրությունը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները սահմանում են բյուջետային գործընթացի մասնակիցների կազմը, իրավասություններն ու փոխհարաբերությունները, իրականացման եղանակները և ժամկետները:

ՀՀ առաջիկա տարվա պետական բյուջեի բյուջետային գործընթացն սկսվում է դրա մասին ՀՀ վարչապետի որոշման ընդունման օրը և ավարտվում՝ տվյալ տարվա բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու օրը: ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետներում պետական լիազորված մարմինը (ՀՀ ֆինանսների նախարարությունը) նաև մշակում և ՏԻՄ-երին է տրամադրում վերջիններիս համար պարտադիր և խորհրդատվական բնույթ կրող մեթոդական ցուցումներ, որոնք բյուջետային գործող օրենսդրության շրջանակներում կանոնակարգում են համայնքի տվյալ տարվա բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր տարի կոնկրետացնելով համայնքի բյուջեի կազմման հիմքում դրվող՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով և նպատակային դրա-

մաշնորհների հաշվարկման համար անհրաժեշտ ելակետային տվյալների ներկայացման կարգը և ժամկետները, պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման և նպատակային հատկացումներ ստանալու նպատակով ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները, բյուջետային ծախսերի նախահաշիվների ձևերը, բյուջետային միասնական ձևերը, և այլ ցուցումներ ու դրույթներ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի, համայնքի բյուջետային գործընթացը կազմակերպվում և իրականացվում է երեք հիմնական փուլերով՝

- բյուջեի նախագծի կազմում, քննարկում և հաստատում,
- բյուջեի կատարում և վերահսկում,
- բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում, քննարկում և հաստատում:

Համայնքի բյուջետային գործընթացի առաջին փուլն սկսվում է պլանավորվող տարվան նախորդող տարվա կեսերին և տևում է առնվազն 6 ամիս: Երկրորդ փուլի տևողությունը կազմում է ուղիղ մեկ տարի, ընդ որում այդ փուլը սկսվելու և ավարտվելու ժամկետներն ամբողջապես համընկնում են պլանավորվող բյուջետային տարվա ժամկետների հետ (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը): Երրորդ փուլն սկսվում է բյուջետային տարվա ավարտին հաջորդող օրվանից: Ըստ օրենքի, բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ղեկավարն ավագանուն ներկայացնում է ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը, իսկ ավագանին այն քննարկում և հաստատում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 20-ը: Փաստորեն, տվյալ տարվա բյուջետային գործընթացի ընդհանուր տևողությունը համայնքներում, որպես կանոն, հասնում է մինչև երկու տարվա:

Համաձայն համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման օրենսդրական պահանջների, այդ գործընթացը պետք է լինի ծրագրավորված և կանոնակարգված<sup>5</sup>: Եվ այսպես, համայնքի բյուջետային գործընթացի մոնիթորինգի իրականացման փուլերը պետք է առանձնացվեն՝ դրանք համապա-

---

<sup>5</sup> Գործընթացի կազմակերպման նախապատրաստում, ակնկալվող եկամուտների աղբյուրների և ծավալների որոշում, նախատեսվող ծախսերի հիմնական ուղղությունների ձևավորում, բյուջեի ֆինանսական հնարավորությունների և ստացված հայտերի համատեղելիության ստուգում, բյուջեի նախնական նախագծի կազմում, բյուջեի հանրային քննարկումների կազմակերպում և/կամ հրապարակայնության ապահովում, բյուջեի վերջնական նախագծի կազմում և ներկայացում ավագանուն, բյուջեի հաստատում, կատարում և վերահսկում, բյուջեի կատարման հաշվետվությունների կազմում, քննարկում և հաստատում:

տասխանեցնելով համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման և իրականացման վերոնշյալ փուլերին: Դա նշանակում է, որ համայնքի բյուջեի մոնիթորինգ իրականացնողները դրա փուլերը պետք է դիտարկեն և վերլուծեն առանձին-առանձին:

***Քայլ 7. Նամայնքի բյուջեարային գործընթացի կազմակերպման վերաբերյալ ՏԻՄ-երի իրավական ակտերի, բյուջեարային փաստաթղթերի ձեռքբերում և ուսումնասիրում***

Համայնքի բյուջետային գործընթացի և բյուջեի մոնիթորինգ իրականացնելու համար, նախ, անհրաժեշտ է ձեռքբերել և ուսումնասիրել համայնքի բյուջետային գործընթացի կառավարման վերաբերյալ ՏԻՄ-երի ընդունած իրավական ակտերը և համապատասխան բյուջետային փաստաթղթերը: Դրանք կարելի է ձեռք բերել բազմաթիվ աղբյուրներից՝ հրատարակված «Համայնքի իրավական ակտերի տեղեկագրից», համայնքի պաշտոնական համացանցային կայքից, անմիջապես համայնքի ղեկավարի աշխատակազմից և այլն: Այդպիսի իրավական ակտերից և փաստաթղթերից են հետևյալները՝

- համայնքի ղեկավարի որոշումը կամ կարգադրությունը համայնքի տվյալ տարվա բյուջետային գործընթացը սկսելու վերաբերյալ (ներառյալ՝ այդ իրավական ակտով հաստատված բյուջետային օրացույցը),
- համայնքի ավագանու որոշումները համայնքի ղեկավարի աշխատակազմի և նրան ենթակա կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքները և հաստիքացուցակները հաստատելու մասին,
- համայնքի ավագանու որոշումը համայնքի տարածքում տվյալ տարվա տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,
- համայնքի ավագանու որոշումները համայնքային ծառայությունների տեսակների և դրանց մատուցման դիմաց գանձվող վճարների չափերը սահմանելու մասին,
- համայնքի ավագանու որոշումները համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և/կամ օտարելու՝ տվյալ տարվա ծրագիրը հաստատելու վերաբերյալ,
- համայնքի ավագանու որոշումները վարկերի, փոխատվությունների կամ այլ փոխառու միջոցների ներգրավման վերաբերյալ,
- համայնքի ավագանու որոշումները բյուջետային եկամուտների արտոնություններ սահմանելու վերաբերյալ,
- համայնքի տվյալ տարվա բյուջեի նախագիծը (ներառյալ՝ համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը և համայնքի ավագանու որոշման նա-

խագիծը),

- համայնքի ավագանու կամ ղեկավարի որոշումը համայնքում բյուջետային հանրային լսումներ կամ քննարկումներ կազմակերպելու մասին,
- համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների առաջարկությունները և եզրակացությունները համայնքի տվյալ տարվա բյուջեի նախագծի վերաբերյալ,
- համայնքի ավագանու որոշումը համայնքի տվյալ տարվա բյուջեն հաստատելու մասին,
- համայնքի տվյալ տարվա բյուջեի վերաբերյալ հրատարակված՝ հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ և գրքույկներ,
- համայնքի ավագանու և/կամ ղեկավարի որոշումները համայնքի տվյալ տարվա բյուջեում փոփոխություններ, լրացումներ կամ վերաբաշխումներ կատարելու մասին,
- համայնքի ավագանու որոշումը համայնքի տվյալ տարվա բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,
- համայնքի ավագանու և/կամ նրա մշտական գործող հանձնաժողովների որոշումները և/կամ արձանագրությունները՝ նրանց կողմից համայնքի տվյալ տարվա բյուջեի կատարման նկատմամբ իրականացված վերահսկողության ղեկավարի կամ ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ,
- համայնքի տվյալ տարվա բյուջեի կատարման վերաբերյալ ներքին և/կամ արտաքին աուդիտների, ՀՀ կառավարության, ՀՀ վերահսկիչ պալատի կողմից կատարված ուսումնասիրությունների մասին եզրակացություններ, ակտեր:

Հասկանալի է, որ ՏԻՄ-երի իրավական ակտերի և համայնքային փաստաթղթերի բերված ցանկը սպառիչ չէ և բյուջեի մոնիթորինգ իրականացնելու համար կարող են պահանջվել նաև այլ իրավական ակտեր և փաստաթղթեր: Շատ դեպքերում, դրանց քանակը և ամբողջականությունն ուղղակիորեն կախված են տեղական իշխանությունների և բյուջեի մոնիթորինգ իրականացնող կազմակերպությունների/ խմբերի համագործակցության մակարդակից, առաջինների տրամադրվածությունից ու բարյացկամությունից և երկրորդների հետևողականությունից ու նպատակասլացությունից:

**Քայլ 8. Նամայնքի բյուջետային գործընթացի մոնիթորինգի իրականացում և արդյունքների սրացում՝ ըստ առանձին փուլերի**

**Բյուջեի կազմում, քննարկում և հաստատում**

Համայնքի բյուջեն կազմելու և ներկայացնելու կարգը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով: Տվյալ տարվա բյուջեի նախագիծը կազմելու ժամանակ ՀՀ ՏԻՄ-երը պարտավոր են առաջնորդվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ընդունված և ՏԻՄ-երին տրամադրված «Պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներով», ինչպես նաև նրանք կարող են առաջնորդվել «Խորհրդատվական բնույթ կրող մեթոդական ուղեցույցով»: Համաձայն օրենքի<sup>6</sup>, համայնքի բյուջեի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը համայնքի զարգացման քառամյա ծրագրով՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա: Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու նպատակով, «Խորհրդատվական բնույթ կրող մեթոդական ուղեցույց» փաստաթղթով առաջարկվում է, որպեսզի համայնքի ղեկավարը մշակի համայնքի բյուջեի նախագծի կազմման օրացույց, որում նշված լինեն բյուջեի նախագծի մշակման հետ կապված բոլոր աշխատանքների կատարման հանգուցային օրերը: Խորհուրդ է տրվում, որ բյուջեի նախագծի կազմման օրացույցում սահմանվող բոլոր աշխատանքները և հանգուցային օրերը համահունչ լինեն ՀՀ վարչապետի որոշումով հաստատված՝ ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեի նախագծի մշակման ժամանակացույցով սահմանված աշխատանքներին և ժամկետներին:

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, այդ օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ<sup>7</sup>:

Համաձայն օրենքի, համայնքի բյուջեի նախագիծը բաղկացած է երկու մասից՝ համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից<sup>8</sup>: Համայնքի բյուջեի մոնիթորինգ իրականացնող կազմակերպությունները/խմբերը պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձի և համայնքի

<sup>6</sup> «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 31

<sup>7</sup> «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 1

<sup>8</sup> «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 31



բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի բովանդակությունները և գնահատեն դրանց համապատասխանությունը օրենքի պահանջներին, որի հիման վրա նրանք կարող են կատարել իրենց եզրակացությունները և առաջարկությունները համայնքի բյուջեի նախագծի վերաբերյալ:

Համայնքի ղեկավարը բյուջեի նախագիծն ավագանու քննարկմանն է ներկայացնում ՀՀ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում, իսկ բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկում նրանց քննարկումից առնվազն մեկ շաբաթ (Երևանի դեպքում՝ 20 օր) առաջ<sup>9</sup>: Համաձայն համայնքի ավագանու կանոնակարգի, ավագանու անդամները և մշտական գործող հանձնաժողովները՝ ստանալով բյուջեի նախագիծը, անցկացնում են նախնական քննարկումներ և մեկշաբաթյա (Երևանի դեպքում՝ 10-օրյա) ժամկետում դրա վերաբերյալ իրենց դիտողությունները և առաջարկությունները գրավոր ներկայացնում են համայնքի ղեկավարին: Երևանի ավագանու կանոնակարգով նաև սահմանվում է, որ Երևանի քաղաքապետը՝ ուսումնասիրելով ավագանու անդամների, խմբակցությունների և մշտական հանձնաժողովների կողմից ներկայացված առարկությունները և առաջարկությունները, ոչ ուշ, քան քառօրյա ժամկետում նրանց է ներկայացնում բյուջեի նախագծի լրամշակված տարբերակը, որի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովները եռօրյա ժամկետում տալիս են իրենց եզրակացությունները:

Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի նախագծի քննարկման կարգը սահմանվում է օրենքով և ավագանու կանոնակարգով: Համայնքի բյուջեի նախագիծը ավագանու նիստում ներկայացնում է համայնքի ղեկավարը կամ նրա ներկայացուցիչը՝ պատասխանելով ավագանու անդամների հարցերին: Զննարկումից հետո, համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին:

### ***Բյուջեի կադրայում***

Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը սահմանում է համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատում է բյու-

---

<sup>9</sup> «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 32, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 55, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 71:

ջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները<sup>10</sup>: Նա օրենքով սահմանված կարգով ապահովում է բյուջեի կատարումը և հսկում է ֆինանսական գործառնությունները ճշգրիտ ու օրենքին համապատասխան կատարումը:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով<sup>11</sup>:

Համայնքի բյուջեի կատարման սպասարկումը, օրենքով<sup>12</sup> և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, իրականացվում է ՀՀ ֆինանսների նախարարության Կենտրոնական գանձապետարանի տարածքային գանձապետական բաժանմունքների (ՏԳԲ-երի) միջոցով, որտեղ յուրաքանչյուր համայնք ունի իր առանձին բյուջետային հաշվի համարը: Համայնքի ենթակայության տակ գործող ոչ առևտրային կազմակերպությունների գանձապետական հաշիվներից գումարների վճարումը ևս կատարում են ՏԳԲ-երը՝ վերջիններիս սպասարկող բանկերի միջոցով: ՏԳԲ-երը համայնքի բյուջեի մուտքերի և ելքերի մասին համայնքի ղեկավարին ներկայացնում են ամենօրյա տեղեկություններ:

Համայնքի բյուջետային միջոցների հաշվապահական հաշվառումն իրականացվում է համապատասխան օրենքների և իրավական ակտերի համաձայն<sup>13</sup>:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամների առաջարկությամբ՝ ավագանու կանոնակարգով սահմանված ընթացակարգով: Համայնքի բյուջեի կատարման ընթացքում վերաբաշխումներ կարող է կատարել նաև համայնքի ղեկավարը, որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ սահմանված չափաքանակները:

---

<sup>10</sup> «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 33

<sup>11</sup> «Գնումների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2010թ. դեկտեմբերի 22-ին, ՀՕ-206-Ն

<sup>12</sup> «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2001թ. հուլիսի 27-ին, ՀՕ-211

<sup>13</sup> «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2002թ. դեկտեմբերի 26-ին, ՀՕ-515-Ն

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008թ. փետրվարի 4-ի հ. 80-Ն հրաման

ՀՀ ֆինանսների նախարարի 2008թ. օգոստոսի 15-ի հ. 730-Ն հրաման

### ***Բյուջեի կապարման հսկողություն և վերահսկողություն***

Համայնքի ղեկավարը՝ հանդիսանալով համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն, իրականացնում է մշտական հսկողություն բյուջեի կատարման նկատմամբ: Համայնքում ներքին աուդիտի իրականացումը պարտադիր պահանջ է և կարգավորվում է ՀՀ օրենքով<sup>14</sup>: Ներքին աուդիտի կատարումը համայնքի ներքին հսկողական գործառույթ է և հետապնդում է հիմնականում տեղեկացման (հավաստիացման) և խորհրդատվական նպատակ: Համայնքում այն իրականացվում է համայնքի ղեկավարի աշխատակազմի ներքին աուդիտի ստորաբաժանման, մասնագետի կամ հրավիրված անձանց միջոցով:

Համայնքի բյուջեի կատարման վերահսկողության ընթացակարգը սահմանված է ՀՀ օրենքներով<sup>15</sup>: Համայնքի բյուջեի կատարման վերահսկողություն իրավասու են իրականացնել համայնքի ավագանին, ՀՀ կառավարությունը և ՀՀ վերահսկիչ պալատը՝ օրենքով սահմանված կարգով և իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Համայնքի բյուջեի կատարման վերահսկողության հիմնական խնդիրները նույնպես սահմանված են օրենքով:

Համայնքի ավագանու կողմից բյուջեի կատարման վերահսկողության հիմնական տարրերից է արտաքին աուդիտը, որը հետապնդում է բյուջեի կատարման իրավական ճշտության ստուգման առաջնային նպատակ և սովորաբար իրականացվում է մասնավոր մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպության կողմից: Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով, ավագանին կարող է (Երևանի դեպքում՝ պարտավոր է) սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է համայնքի բյուջեից:

ՀՀ կառավարությունը համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է պետական բյուջեից համայնքին տրված նպատակային հատկացումների (սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից համայնքի բյուջե մասհանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների) օգտագործման, ինչպես նաև պետական բյուջեից և օրենքով թույլատրված այլ աղբյուրներից ներգրավված փոխառու

<sup>14</sup> «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2010թ. դեկտեմբերի 22-ին, ՀՕ-17-Ն

<sup>15</sup> «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 34  
«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 68, 68<sup>1</sup>  
«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 81

միջոցների օգտագործման և դրանց մարման ծրագրի նկատմամբ՝ իր կողմից սահմանված կարգով, պաշտոնական լիազոր մարմնի (ՀՀ ֆինանսների նախարարության) միջոցով<sup>16</sup>:

Համայնքների բյուջեների կատարման նկատմամբ վերահսկողության բնագավառում համեմատաբար ավելի լայն լիազորություններ ունի ՀՀ վերահսկիչ պալատը՝ ընդգրկելով համայնքների բյուջեների միջոցների և սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողությունը, որի կարգը սահմանվում է «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով: Ուսումնասիրելով ՀՀ վերահսկիչ պալատի պաշտոնական համացանցային կայքում զետեղված տեղեկատվությունը ընթացիկ հաշվետվությունների մասով՝ կարելի է պատկերացում կազմել ՀՀ առանձին համայնքների տարբեր տարիների բյուջեների կատարման ժամանակ հայտնաբերված խախտումների, բացթողումների և թերությունների վերաբերյալ<sup>17</sup>:

***Բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների կազմում, քննարկում և հաստատում***

Համայնքի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունների կազմման, ներկայացման և հաստատման ընթացակարգը սահմանված է օրենքով<sup>18</sup>: Պետք է միայն հաշվի առնել, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բաց է թողնված Երևանի քաղաքապետի կողմից ավագանուն բյուջեի եռամսյա կատարման մասին հաղորդումներ ներկայացնելու մասին դրույթը, որը լրացվել է Երևանի ավագանու կանոնակարգով<sup>19</sup>:

Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ աուդիտորական վերստուգիչ մարմինն ավագանուն է ներկայացնում իր ուսումնասիրությունների եզրակացությունները, որոնց առկայությամբ ավագանին քննարկում և որոշում է կայացնում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին: Ավագանու նիստում այդ հաշվետվությունը քննարկվում և հաստատվում է համայնքի բյուջեի նախագծի քննարկման և ընդունման համար սահմանված կարգով:

Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության բովանդակությունը սահմանվում է օրենքով և ենթաօրենսդրական համապատասխան

<sup>16</sup> «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 34

<sup>17</sup> [www.coc.am](http://www.coc.am)

<sup>18</sup> «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 35, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 69:

<sup>19</sup> Երևանի ավագանու կանոնակարգ, կետ 147

ակտով<sup>20</sup>: Պետք է ուշադրություն դարձնել, որ, համաձայն վերջինիս, համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը բաղկացած է երկու՝ վերլուծական և թվային մասերից:

### ***Բյուջեի թափանցիկությունը և հրապարակայնությունը***

Համայնքի բյուջեի հրապարակայնությունը նշանակում է, որ ՏԻՄ-երը պետք է ապահովեն համայնքի բյուջեի ձևավորման և կատարման վերաբերյալ համայնքի անդամների իրազեկությունը: Համայնքի բյուջեի հրապարակայնության ապահովման պահանջները սահմանված են օրենքով<sup>21</sup>: ՏԻՄ-երի կողմից օրենքի այս պահանջների կատարման շնորհիվ համայնքի անդամները, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտները, շահագրգիռ այլ անձինք հնարավորություն են ստանում ծանոթանալ համայնքի բյուջեի նախագծին, դրա կատարման հաշվետվություններին և դրանց վերաբերյալ ՏԻՄ-երին ներկայացնել իրենց կարծիքները, դիտողությունները և առաջարկությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինտերնետը դեռևս լայն տարածում չունի բնակչության, հատկապես սոցիալապես անապահով խավերի շրջանում, ցանկալի կլիներ բյուջեների նախագծերը և դրանց կատարման հաշվետվությունները հրապարակել պարբերաբար լույս տեսնող տեղական մամուլում, կամ պատրաստել և հրատարակել բյուջեի հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ և գրքույկներ, ինչպես նաև դրանք ներկայացնել տեղական հեռուստատեսությամբ՝ հաղորդումների, հարցազրույցների և այլ հեռուստածրագրերի միջոցով:

Բացի այդ, համայնքի բյուջեի նախնական նախագծի շուրջ ՏԻՄ-երը կարող են կազմակերպել հանրային լսումներ կամ քննարկումներ՝ համայնքի ավագանու անդամների, համայնքի ղեկավարի աշխատակազմի և նրան ենթակա կազմակերպությունների, քաղաքացիների, հասարակական և մասնավոր հատվածի կազմակերպությունների մասնակցությամբ: Համայնքի ավագանու հաստատումից հետո, համայնքի բյուջեն և դրա կատարման հաշվետվությունը հրապարակվում են օրենքով սահմանված կարգով:

Համաձայն օրենքի, բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո մեկ ամսվա ընթացքում հրապարակվում է նաև տեղեկատվություն համայնքի բյուջեի եռամսյակային կատարման մասին:

<sup>20</sup> «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 35-ի կետ 7, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008թ. փետրվարի 4-ի հ. 80-Ն հրաման:

<sup>21</sup> «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 36

**Քայլ 9. Համայնքի բյուջեարային տվյալների շրեմարանի արեղծում, օգտագործում և թարմացում, համայնքի ֆինանսական ցուցանիշների սահմանում**

Համայնքի բյուջեի մոնիթորինգի բաղկացուցիչ մասն է կազմում համայնքի ընդհանուր ֆինանսական վերլուծությունը, որի կատարման համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ համայնքի տվյալ տարվա բյուջետային տվյալները: Համայնքի ավագանու կողմից հաստատված բյուջեն և դրա կատարման տարեկան հաշվետվությունը այն հիմնական փաստաթղթերն են, որոնք պարունակում են համայնքի տվյալ տարվա բյուջետային տվյալները: Համայնքի բյուջեի կազմման օրինակելի ձևը յուրաքանչյուր տարի ՏԻՄ-երին է տրամադրվում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ «Պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումների» հավելվածի տեսքով:

Համայնքի ֆինանսական վերլուծություն կատարելու մեթոդաբանությամբ առաջարկվում է հիմնվել համայնքի մեկ կամ մի քանի տարիների բյուջեների և դրանց կատարման տարեկան հաշվետվությունների պարունակած տեղեկատվության վրա և ստեղծել համայնքի բյուջետային տվյալների շտեմարան, որի կառուցվածքը, խորհուրդ է տրվում, խստորեն համապատասխանեցնել ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված բյուջետային դասակարգմանը (խոշորացված հոդվածներով):

- բյուջետային եկամուտներ,
- բյուջետային ծախսեր ըստ գործառական դասակարգման,
- բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման,
- բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրները:

Համայնքի ֆինանսական վերլուծություն կատարելու համար կարևոր գործոն է տարեկան գնաճի (ինֆլյացիայի) հաշվի առնումը: Դա հնարավորություն է տալիս ավելի իրատեսական գնահատականներ տալ տարիների ընթացքում ծախսված գումարների և կատարված աշխատանքների իրական ծավալների և արդյունավետության վերաբերյալ: Այնտեղ, որտեղ նպատակահարմար գտնվի, անհրաժեշտ է ֆինանսական վերլուծությունը կատարել՝ հաշվի առնելով մասնավորապես տարեկան միջին գնաճը՝ սպառողական գների ինդեքսը:

Համայնքի ֆինանսական արդյունավետ վերլուծություն կատարելու համար շատ կարևոր է ֆինանսական ցուցանիշների ճիշտ սահմանումը (ընտրությունը), դրանց գնահատումը և օգտագործումը: Կարող են ընտրվել և օգտագործվել միջազգայնորեն ընդունված ֆինանսական ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշներ: Ֆինանսական բացարձակ ցուցանիշ-

ներն օգտակար են որոշակի ժամանակահատվածում տվյալ համայնքի բյուջետային մուտքերի և ելքերի փոփոխությունները վերլուծելու և գնահատելու համար: Սակայն, համայնքի տարբեր տարիների բյուջետային տվյալների համեմատական վերլուծություններ կատարելու համար, առավել նպատակահարմար է ֆինանսական հարաբերական ցուցանիշների օգտագործումը: Կարելի է արդյունավետորեն զուգակցել ֆինանսական բացարձակ և հարաբերական ցուցանիշների ընտրությունը, օգտագործումը և գնահատումը:

Մյուս կողմից, ֆինանսական ցուցանիշների քանակը պետք է օպտիմալ լինի: Քիչ քանակով ցուցանիշների օգտագործումը կարող է չապահովել վերլուծության ամբողջականությունը և լիարժեքությունը, իսկ չափից շատ քանակով ցուցանիշների առկայությունը կարող է առաջ բերել վերլուծական շփոթություն և տարաբնույթ մեկնաբանություններ: Այստեղից հետևում է, որ պետք է ընտրել ֆինանսական ցուցանիշներից ամենակարևորները և ամենաօգտակարները, որոնց գնահատումը կապահովի վերլուծությունների արդյունավետությունը և եզրահանգումների հավաստիությունը:

Ուսումնասիրելով տեղական և միջազգային փորձը ֆինանսական վերլուծություններ կատարելու բնագավառում՝ սույն մեթոդաբանությամբ առաջարկվում է հետևյալ հիմնական ֆինանսական ցուցանիշների ընտրությունը՝

- **Ընդհանուր ֆինանսական ցուցանիշներ**
  - ✓ Համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերի տեսակարար կշիռը երկրի հանրային ծախսերում
  - ✓ Համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերի տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ-ում)
  - ✓ Համայնքի բնակչության մեկ շնչի հաշվով բյուջետային եկամուտները/ծախսերը
  - ✓ Համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների/ծախսերի հաստատված և ճշտված պլանների փաստացի կատարումը
- **Եկամտային ցուցանիշներ**
  - ✓ Համայնքի սեփական եկամուտների փաստացի կատարումը
  - ✓ Համայնքի կողմից ստացված պաշտոնական դրամաշնորհների (ընթացիկ և կապիտալ) փաստացի կատարումը
  - ✓ Համայնքի բյուջեի առանձին եկամտատեսակների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտներում
  - ✓ Համայնքի բյուջեի առանձին եկամտատեսակների (հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի, պետական տուրքերի, այլ եկամուտների) հավաքագրման մակարդակները

- ✓ Համայնքի ոչ ֆինանսական ակտիվների (հողի և գույքի) իրացումից մուտքերի ծավալները և գանձման մակարդակները
- ✓ Համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտներում վարչական և ֆոնդային մասերի եկամուտների հարաբերակցությունները
- **Ծախսային ցուցանիշներ**
  - ✓ Համայնքի բյուջեի ծախսերի (ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման) հաստատված և ճշտված պլանների փաստացի կատարումը
  - ✓ Համայնքի բյուջեի ծախսերի (ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման) տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում
  - ✓ Համայնքի աշխատողների աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարների փաստացի կատարումը
  - ✓ Համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հարաբերակցությունները
- **Բյուջետային եկամուտների և ծախսերի հավասարակշռման ցուցանիշներ**
  - ✓ Համայնքի բյուջեի վարչական/ֆոնդային մասի հավելուրդի/պակասուրդի տեսակարար կշիռն ընդհանուր հավելուրդում/պակասուրդում:

Իհարկե, համայնքի ֆինանսական ցուցանիշների վերջնական ընտրությունը խիստ պայմանական է, քանի որ թվարկված ցուցանիշները փոխկապակցված են միմյանց հետ, ինչպես նաև ընտրված ցուցանիշների գնահատման ընթացքում չի բացառվում, որ վերլուծության ենթարկվեն նաև հարակից այլ ցուցանիշներ: Ամեն դեպքում, բյուջեի մոնիթորինգ և ֆինանսական վերլուծություն կատարողները պետք է վերջնական ընտրություն կատարեն և սահմանեն համայնքի այն ֆինանսական ցուցանիշները, որոնց գնահատման արդյունքում նրանք կարող են պատկերացում կազմել համայնքի ֆինանսական վիճակի, փոփոխությունների պատճառների և միտումների վերաբերյալ:

***Քայլ 10. Նամայնքի ֆինանսական վերլուծության իրականացում, եզրակացությունների հանգում և առաջարկությունների մշակում***

Համայնքի ֆինանսական վերլուծության իրականացումը կայանում է սահմանված ֆինանսական ցուցանիշների գնահատման, դրա արդյունքում որոշակի եզրակացությունների հանգման և առաջարկությունների մշակման մեջ: Նշենք, որ ՀՀ բոլոր համայնքների բյուջեների հանրագումարի համար վերևում թվարկված ցուցանիշների մեծ մասը յուրաքանչյուր տարի գնահատ-



ման է ենթարկվում «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ կողմից՝ յուրաքանչյուր բյուջետային տարին ավարտվելուց հետո<sup>22</sup>: Դա հնարավորություն է տալիս առանձին համայնքի ֆինանսական ցուցանիշների գնահատման արդյունքները համեմատել ՀՀ բոլոր համայնքների բյուջեների հանրագումարի արդեն գնահատված նույն ֆինանսական ցուցանիշների հետ և գնահատել տվյալ համայնքի դերն ու տեղը ՀՀ բոլոր համայնքների շարքում:

### ***Ընդհանուր ֆինանսական ցուցանիշների գնահատում***

Համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռները տվյալ երկրի հանրային ծախսերում և ՀՆԱ-ում ցույց են տալիս այդ երկրում իշխանության ապակենտրոնացման աստիճանը<sup>23</sup>:

Համայնքի ֆինանսական ապահովվածության կարևոր հարաբերական ցուցանիշներից են բնակչության մեկ շնչին ընկնող համայնքի բյուջեի եկամուտը և ծախսը: Գնահատելով այս ֆինանսական ցուցանիշների արժեքները առանձին համայնքի համար՝ կարելի է պատկերացում կազմել նրա ֆինանսական միջոցներով ապահովվածության մասին՝ համեմատած հանրապետական միջինի հետ:

Գնահատելով համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների և ծախսերի հաստատված և ճշտված պլանների փաստացի կատարումները՝ կարելի է պատկերացում կազմել համայնքի բյուջետային կատարողականության մակարդակի վերաբերյալ և համեմատել նույն ցուցանիշների հանրապետական, մարզային կամ տարածաշրջանային միջինի հետ: Հաշվի առնելով նաև հանրապետությունում տարեկան արձանագրված գնաճը՝ կարելի է նաև գնահատել համայնքի իրական եկամուտների կամ ծախսերի աճը/նվազումը:

### ***Եկամտային ցուցանիշների գնահատում***

Համայնքի ֆինանսական անկախության աստիճանը բնորոշող կարևոր ցուցանիշներից է համայնքի բյուջեի սեփական եկամուտների (հարկերը, տուրքերը և այլ եկամուտները) տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ: Ֆինանսական այս ցուցանիշը հնարավորություն է տալիս մոնիթորինգի ենթարկել համայնքի ֆինանսական անկախության աստիճանն ըստ տարիների և արձանագրել միտումները սեփական եկամուտների հավա-

<sup>22</sup> Տե՛ս Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004-2006թթ.), (2007 և 2008թթ.), (2009 և 2010թթ.), Դ. Թումանյանի խմբագրությամբ:

<sup>23</sup> Հանրային ծախսերի հաշվարկման մեթոդաբանությունը տարբերվում է ըստ երկրների: Հայաստանում հանրային ծախսերի տակ դիտարկվում են ՀՀ համախմբված բյուջեի ծախսերը, իսկ ՀՆԱ-ի տակ դիտարկվում է անվանական ՀՆԱ-ն:

քաղաքական հարցում, ինչպես նաև այն համեմատել ՀՀ մյուս համայնքների ֆինանսական անկախության աստիճանի հետ:

Համայնքի բյուջեի սեփական եկամուտների կազմում կարևորվում են նաև առանձին եկամտատեսակների (հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի, պետական տուրքերի, այլ եկամուտների) հավաքագրման մակարդակների գնահատման ֆինանսական ցուցանիշները:

Կարևոր ֆինանսական ցուցանիշ է համայնքի ոչ ֆինանսական ակտիվների (հողի և գույքի) իրացումից մուտքերի ծավալների և գանձման մակարդակների գնահատումը: Վերջին տարիներին նկատվում է այս ուղղությամբ բյուջետային մուտքերի նվազման միտում, քանի որ աստիճանաբար սպառվում են համայնքների սեփականություն համարվող օտարման ենթակա լավագույն հողակտորները:

Համայնքի բյուջեի եկամուտների կազմում կարևորվում են նաև համայնքի կողմից ՀՀ պետական բյուջեից ստացված պաշտոնական դրամաշնորհների (ընթացիկ և կապիտալ) բացարձակ և հարաբերական ցուցանիշները, քանի որ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունեն հենց պաշտոնական դրամաշնորհները, այդ թվում՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, այլ դոտացիաները, և նպատակային հատկացումները (ընթացիկ և կապիտալ սուբվենցիաները):

Եվ վերջապես, կարևոր ֆինանսական ցուցանիշներից է համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների մեջ: Ֆոնդային բյուջեի եկամուտների չափը ցույց է տալիս համայնքի ֆինանսական հնարավորությունները՝ կատարելու կապիտալ նորոգման և ներդրումների աշխատանքներ համայնքային ենթակառուցվածքների վրա, ինչպես նաև կառուցելու նորերը:

### ***Ծախսային ցուցանիշների գնահատում***

Ֆինանսական ցուցանիշների առանձին խումբ են կազմում համայնքի բյուջեի ծախսերի հարաբերական ցուցանիշները համայնքային ծառայությունների մատուցման շրջանակներում կամ, որ նույնն է՝ ՏԻՄ-երին օրենքով տրված լիազորությունների ֆինանսական ապահովումն ըստ բնագավառների, կամ համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման: ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների ծախսերին վերաբերող ֆինանսական ցուցանիշների գնահատումները ցույց են տալիս, թե կատարված բյուջետային ծախսերը ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել բնակչու-

թյան սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և, ընդհանրապես, նրա կենսամակարդակի վրա:

ՏԻՄ-երի գործունեության արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, կարևոր ֆինանսական ցուցանիշներ են համայնքային աշխատողների աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարների տեսակարար կշիռները համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերում՝ ըստ տնտեսագիտական դասակարգման: Այս ցուցանիշների գնահատման արդյունքում, հնարավոր է, որ ՏԻՄ-երը գան եզրակացության, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ օպտիմալացնելու համայնքային աշխատողների թվաքանակը և աշխատավարձերի ու սոցիալական ապահովության վճարների գծով կատարվող ծախսերից խնայված գումարներն ուղղելու ծախսային այլ կարիքներին:

Դրական է համարվում համայնքի բյուջեից կատարվող սուբսիդավորման ծախսերի տեսակարար կշռի աճը, որը նշանակում է, որ համայնքը գնալով ավելի շատ աշխատանքների կատարում և (կամ) համայնքային ծառայությունների մատուցում է պատվիրակում մասնագիտացված կազմակերպություններին, որն էլ, իր հերթին, բերում է համայնքային ծառայությունների շրջանակի, ծավալների և որակի աստիճանական բարձրացման:

***Բյուջեարային եկամուրդների և ծախսերի հավասարակշռման ցուցանիշների գնահատում***

Համայնքի բյուջեի վարչական/ֆոնդային մասի հավելուրդի/պակասուրդի տեսակարար կշիռն ընդհանուր հավելուրդում/պակասուրդում ցույց է տալիս, թե բյուջեի ո՞ր մասի հավելուրդը/պակասուրդն ի՞նչ տեսակարար կշիռ ունի բյուջեի ընդհանուր հավելուրդում/պակասուրդում: Համայնքների բյուջեների ընդհանուր հավելուրդի կամ պակասուրդի մեջ սովորաբար գերակշռող մաս կազմում են ֆոնդային բյուջեների հավելուրդը կամ պակասուրդը:

***Քայլ 11. Նամայնքի բյուջեի մոնիթորինգի իրականացման վերաբերյալ փաստաթղթի մշակում, քննարկում և հրատարակում***

Համայնքի բյուջեի մոնիթորինգը և ֆինանսական վերլուծությունն իրականացնող կազմակերպությունները/խմբերը, որպես արդյունք, պետք է հանգեն որոշակի եզրակացությունների՝ համայնքի ֆինանսական վիճակի, համայնքում կատարված փոփոխությունների բնույթի, պատճառների և ապագա միտումների վերաբերյալ, որոնց հիման վրա նրանք պետք է մշակեն իրենց առաջարկությունները համայնքում որոշակի ուղղություններով բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ: Այդ ամենի ներառմամբ, մշակվում է հա-

մայնքի բյուջեի մոնիթորինգի իրականացման վերաբերյալ փաստաթղթի նախնական տարբերակը, որի ներկայացման և քննարկման նպատակով, պետք է կազմակերպել և անցկացնել համայնքային կլոր-սեղան՝ հրավիրելով համայնքի ՏԻՄ-երին, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների, համայնքում գործող հասարակական և մասնավոր հատվածի սուբյեկտների ներկայացուցիչներին, համայնքի զարգացմամբ շահագրգիռ այլ անձանց: Այս փաստաթղթի քննարկման արդյունքներով, այն պետք է խմբագրել, բերել վերջնական տեսքի և հրապարակել: Փաստաթուղթն անհրաժեշտ է տրամադրել ինչպես ՏԻՄ-երին և համայնքային կառույցներին, այնպես էլ համայնքում գործող հասարակական և մասնավոր հատվածի սուբյեկտներին, շահագրգիռ այլ անձանց:

## 2. ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2010 – 2011թթ. ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### 2.1. Երևանի բյուջեի մոնիթորինգի իրականացման իրավա- կան և ծրագրային հիմքերը

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների ընդունմամբ Երևանն ստա-  
ցավ առանձնահատուկ համայնքի կարգավիճակ: «Երևան քաղաքում տեղա-  
կան ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը հիմնականում կարգավորում է  
Երևանում տեղական ինքնակառավարման և Երևանի ՏԻՄ-երի ձևավորման  
առանձնահատկությունները: Այս օրենքով, ՀՀ այլ համայնքների համեմատ,  
բավականին ընդլայնվել են Երևանի ավագանու իրավասությունները, ամ-  
րագրվել են Երևանում տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների և  
քաղաքացիական հասարակության սուբյեկտների մասնակցության նոր մե-  
խանիզմներ: Դրանցից են, մասնավորապես՝

- ընտրողների իրավունքը՝ նախաձեռնելու ավագանու որոշումների,  
ուղերձների և հայտարարությունների ընդունումը;
- ավագանու իրավասությունները՝ անցկացնելու հանրային լսումներ և  
քննարկումներ; սահմանելու Երևանի վարչական շրջանի ղեկավարին  
կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների  
կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները;
- ավագանու խմբակցությունների իրավունքը՝ նախաձեռնելու և ստեղծե-  
լու ժամանակավոր քննող հանձնաժողով՝ Երևանում տեղական ինքնա-  
կառավարմանը վերաբերող, հասարակական հետաքրքրություն ներկա-  
յացնող փաստեր պարզելու նպատակով;
- Երևանի քաղաքապետի պարտավորությունը՝ ամենամյա հաշվետվու-  
թյուններ ներկայացնելու հանրությանը ավագանու, իր գործունեության  
և Երևանի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին; և այլն:

Ի լրումն օրենքի, Երևանի ավագանու գործող կանոնակարգը հիմնակա-  
նում կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաս-  
տումը և անցկացումը՝ ներառելով ավագանու անդամների, խմբակցություննե-  
րի և հանձնաժողովների գործունեության հետ կապված մի շարք կարգեր:  
Մասնավորապես, ավագանու կանոնակարգում սահմանվում է ավագանու  
անդամների, խմբակցությունների և հանձնաժողովների կողմից բյուջեի նա-  
խագծի և բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախնական քն-  
նարկումների, դրանց վերաբերյալ առարկությունների, առաջարկությունների

և եզրակացությունների ներկայացման ընթացակարգերը, ինչպես նաև ավագանու նիստում քաղաքապետի կամ նրա ներկայացուցչի կողմից բյուջեի նախագծի և բյուջեի կատարման տարեկան հաշվետվության ներկայացման և ավագանու կողմից դրանց քննարկման ու ընդունման կարգերը: Ընդունվել և գործողության մեջ են դրվել Երևանի ավագանու հիմնական մարմինների՝ 2 խմբակցությունների կանոնադրությունները և 4 մշտական հանձնաժողովների կանոնակարգերը, որոնք հիմնականում կանոնակարգում են դրանց գործունեության կառավարումը, նիստերի կազմակերպման և անցկացման կարգը, ինչպես նաև դրանց ղեկավար մարմինների գործունեության կանոնները:

Երևանի ավագանու կողմից հաստատվել են իր ստեղծած «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը, Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի կառուցվածքները և հաստիքացուցակները, որոնք երկու տարիների ընթացքում ենթարկվել են որոշակի փոփոխությունների և լրացումների: Երևանի քաղաքապետի կողմից հաստատվել են քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված (բացառությամբ Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի) ստորաբաժանումների կանոնադրությունները, իսկ վարչական շրջանների ղեկավարների կողմից՝ նրանց աշխատակազմերի կանոնադրությունները: Հաստիքացուցակներում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում, 2011թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծվել են 416 հաստիք, առանձնացված ստորաբաժանումներում՝ 1548 հաստիք, այդ թվում վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում՝ 1292 հաստիք, ընդամենը՝ 1964 հաստիք: Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գործում են 171 ՊՈԱԿ-ներ, 234 ՀՈԱԿ-ներ և 63 առևտրային կազմակերպություններ՝ ՓԲԸ-երի տեսքով:

Երևանի ավագանու համապատասխան որոշումներով հաստատվել են Երևան քաղաքի զարգացման 2010-2013թթ. քառամյա ծրագիրը, 2010թ. և 2011թ. միամյա ծրագրերը, որոնք էլ ծրագրային հիմք են հանդիսացել Երևանի 2010թ. և 2011թ. բյուջեների ձևավորման և կատարման համար: Այդ ծրագրերում ներառվել են մի շարք հատուկ և երկարաժամկետ ծրագրեր, որոնք ուղղված են Երևանի սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներում կոնկրետ խնդիրների լուծմանը: Սակայն, Երևանի պաշտոնական համացանցային կայքում բացակայում են ավագանուն ներկայացման ենթակա հաշվետվությունները՝ Երևանի զարգացման միամյա ծրագրերի և արդեն ավարտված հատուկ ու եր-

կարաժամկետ ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Մշակված և ընդունված չէ Երևանի զարգացման ռազմավարական որևէ ծրագիր: Մակայն, հաշվի առնելով Երևան քաղաքի մեծությունը, առանձնահատուկ կարգավիճակը և ունեցած մեծ դերը հանրապետության կյանքում, քաղաքում առկա խնդիրների մասշտաբները և ոլորտային բազմազանությունը, քաղաքի արդյունավետ կառավարման և հետագա զարգացման համար մեծ նշանակություն կարող է ունենալ քաղաքի զարգացման համապարփակ, ռազմավարական ծրագրի առկայությունը՝ դրա մշակման և իրականացման ընթացքում կիրառելով ռազմավարական պլանավորման և կառավարման բնագավառում միջազգային և տեղական առկա փորձը, ինչպես նաև հանդես բերելով քաղաքացիական հասարակության մասնակցային մոտեցումներ:

## ***2.2. Երևանի բյուջետային գործընթացի մոնիթորինգի իրականացումից սրացված արդյունքները***

Երևան քաղաքի 2009թ. բյուջեն ձևավորվել և կատարվել է Երևանի նախկին քաղաքապետարանի և թաղային համայնքների 2009թ. բյուջեների միավորմամբ, իսկ Երևան համայնքի միասնական բյուջեի մշակման, ընդունման, կատարման և վերահսկման ամբողջական գործընթացն առաջին անգամ կազմակերպվեց և իրականացվեց ՀՀ 2010թ. բյուջետային գործընթացի շրջանակներում: Հիմնվելով համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպման ՀՀ գործող օրենսդրության պահանջների վրա, մոնիթորինգի են ենթարկվել և մանրամասն ուսումնասիրվել ու վերլուծվել են Երևան քաղաքի 2010-2011թթ. բյուջետային գործընթացները, ինչպես նաև կատարվել է հակիրճ ֆինանսական վերլուծություն՝ Երևանի 2009-2011թթ. բյուջետային տվյալների օգտագործմամբ: Այսպիսով, Երևան քաղաքի 2009-2011թթ. բյուջեների մոնիթորինգի իրականացման արդյունքներով, կարելի է կատարել հետևյալ հիմնական եզրակացությունները և առաջարկությունները՝

- Երևանում հաջորդ տարվա բյուջետային գործընթացի սկիզբն ազդարարվում է Երևանի քաղաքապետի որոշումով, որով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարներին հանձնարարվում է այն հիմնական աշխատանքները՝ համապատասխան ժամկետներով, որոնք անհրաժեշտ է կատարել Երևանի բյուջեի նախագիծը մշակելու համար: Համեմատելով ՀՀ-ում բյուջետային գործընթացը սկսելու վերաբերյալ ՀՀ վարչապետի և Երևանի քաղաքապետի որոշումներով հաստատված

աշխատանքները և դրանց կատարման ժամկետները, պետք է նկատել, որ Երևանի քաղաքապետի որոշումը կայացվում է ՀՀ վարչապետի որոշումից բավական ուշ՝ 8-9 ամիս հետո, որի պատճառով Երևանի քաղաքապետի որոշման մեջ չեն ներառվել ՀՀ բյուջետային գործընթացով նախատեսված որոշ աշխատանքներ՝ սահմանված ՀՀ վարչապետի որոշմամբ<sup>24</sup>: Այդ առթիվ առաջարկվում է՝ Երևանում հաջորդ տարիների բյուջետային գործընթացն սկսելու մասին Երևանի քաղաքապետի որոշումը կայացնել համեմատաբար ավելի վաղ, օրինակ, ընթացիկ տարվա մայիս-հունիս ամիսներին և բյուջեի մշակման աշխատանքների ցանկում հաշվի առնել նաև ՀՀ վարչապետի որոշմամբ սահմանված կարևոր աշխատանքներ՝ համապատասխան ժամկետներով: Բացի դրանից, առաջարկվում է Երևանի քաղաքապետի որոշումով հաստատել նաև բյուջետային օրացույց կամ ժամանակացույց (հավելվածի տեսքով), որտեղ մանրամասն կթվարկվեն բյուջեի նախագծի մշակման բոլոր աշխատանքները, դրանց կատարման ժամկետները և պատասխանատուները:

- Երևանի քաղաքապետի՝ 2010թ. և 2011թ. Երևանի զարգացման հիմնական ուղղությունների մասին զեկույցները հիմնականում հիմնված են Երևան քաղաքի 2010-2013թթ. զարգացման քառամյա և 2010թ., 2011թ. զարգացման միամյա ծրագրերի վրա, այնտեղ ըստ գործունեության ոլորտների սահմանվել են քաղաքի զարգացման տարեկան առաջնահերթ ուղղությունները:
- Չնայած Երևանի քաղաքապետի 2010թ. և 2011թ. բյուջետային ուղերձներում եկամուտների, ծախսերի և պակասուրդի հիմնավորումները և կանխատեսումները, ինչպես նաև դրանց համեմատական վերլուծությունը նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաստատված և հաշվարկային (ճշտված) ցուցանիշների հետ կատարվել են բավարար մանրամասնությամբ (հոդված առ հոդված) և բարեխղճությամբ, այնուամենայնիվ, դրանցում զգացվում է հստակության և

<sup>24</sup> Մասնավորապես, այդպիսի աշխատանքներից են՝

- համայնքի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և ներկայացման՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված մեթոդական ցուցումների և ուղեցույցների ստացումը, ուսումնասիրումը և կիրառումը,
- համայնքներին ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացվող դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվելիք հողի հարկի և գույքահարկի գծով ելակետային տվյալները համայնքների կողմից (տարածքային կառավարման մարմինների միջոցով) ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացնելը,
- ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու մասին համայնքների կողմից բյուջետային ֆինանսավորման հայտեր ներկայացնելը:



մատչելիության որոշ պակաս՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վերլուծությունը կատարվել է միայն տեքստային ձևով, առանց մեկնաբանող աղյուսակների և գծապատկերների:

- Երևան քաղաքի 2010թ. և 2011թ. բյուջեների նախագծերով նախատեսված նպատակային ծրագրերի կատարման համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորումների ձևը չի համապատասխանում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջներին, ըստ որոնց յուրաքանչյուր ծրագրի հիմնավորումը ներառում է դրա իրավական հիմքը, բովանդակությունը, խնդիրները և նպատակները, կատարման փուլերը և ժամկետները:
- Երևանի 2010 և 2011թթ. բյուջեների նախագծերում Երևանի քաղաքապետի բյուջետային ուղերձներում բացակայում են՝
  - ✓ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված տեղեկությունները ՀՀ պետական բյուջեի նախագծում Երևանի բյուջեին նախատեսված հատկացումների մասին,
  - ✓ սպասվելիք դրամական և նյութական օգնություններից, նվիրատվություններից և այլ մուտքերից զոյացող միջոցներից կատարվող հատկացումների հիմնավորումները,
  - ✓ տեղեկություններ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների (զբաղեցրած հաստիքների) միջին տարեկան ցուցակային թվաքանակի մասին: Այս տեղեկությունների ներկայացման ձևը՝ աղյուսակի տեսքով, բերվում է յուրաքանչյուր տարի ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատվող և ՏԻՄ-երին տրամադրվող «Պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներին» կից ներկայացվող բյուջետային ձևերում,
  - ✓ այլ տեղեկություններ, որոնք Երևանի քաղաքապետն անհրաժեշտ է համարել Երևանի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի հիմնավորման համար:
- Երևանի 2010թ. և 2011թ. բյուջեների մասին ավագանու որոշման նախագծերը համապատասխանում են օրենքով սահմանված պահանջներ:

րին և ներառում են Երևանի բյուջեների եկամուտները, ծախսերը, պակասուրդները և դրանց ֆինանսավորման աղբյուրները՝ օրենքով սահմանված դասակարգմամբ, ինչպես նաև բյուջեների վարչական և ֆոնդային մասերից հատկացումների վերծանումը՝ ըստ Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների:

- Երևանի 2010թ. և 2011թ. բյուջեների նախագծերն ավագանու նիստերում քննարկվել են օրենքի դրույթներին և ավագանու կանոնակարգով սահմանված ընթացակարգին համապատասխան և ընդունվել են ավագանու համապատասխան որոշումներով:
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում բյուջեի կատարման մասով հողվածների դրույթների ձևակերպումների միջև գոյություն ունեն որոշակի անհամապատասխանություններ՝ տեղիք տալով անհստակության և տարաբնույթ մեկնաբանությունների (մասնավորապես, ավագանու կողմից հաստատված բյուջեի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից բյուջետային փաստաթղթերի տարբեր ցանկերի հաստատման և գանձապետական ստորաբաժանում ներկայացման տարբեր ժամկետների առումով)<sup>25</sup>:
- «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո փոքր-ինչ պարզեցվել է համայնքի գնումների գործընթացի կազմակերպման ընթացակարգը, սակայն, այն դեռևս շարունակում է մնալ բարդ, աշխատատար և ժամանակատար, ինչը երբեմն խոչընդոտում է պլանավորված աշխատանքները նախատեսված ժամկետներում, գներով և որակով կատարելու համար:
- Երևանի ավագանու թվով 9 որոշումներով Երևան քաղաքի 2010թ. բյուջեում, Երևանի քաղաքապետի առաջարկությամբ, կատարվել են ընդամենը 4,200,980.4 հազ. դրամի փոփոխություններ: Իսկ Երևանի քաղաքապետն իր կայացրած թվով 22 որոշումներով Երևանի 2010թ. բյուջեում կատարել է ընդամենը 5,152,291.4 հազ. դրամի վերաբաշխումներ: Դրանց չափաքանակները չեն գերազանցում օրենքով սահմանված սահմանափակումները, սակայն բյուջետային մեկ տարվա ընթացքում ավագանու և քաղաքապետի կողմից բյուջեում փոփոխությունների ու վերաբաշխումների կատարման համեմատաբար մեծ քանակը խոսում է այն մասին, որ բյուջեի եկամուտների և ծախսերի՝ ավագանու կողմից

<sup>25</sup> «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հողված 33 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հողվածներ 78-80

հաստատված պլանները, ինչպես նաև տարվա ընթացքում դրանց ճշտված պլանները Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից կանխատեսվել են ոչ այնքան ճշգրիտ ու հիմնավորված:

- Ելնելով ներքին աուդիտի՝ օրենքով սահմանված սկզբունքներից (անկախություն, օբյեկտիվություն, կարողունակություն, անկողմնակալություն և գաղտնիություն), առաջարկվում է Ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության բաժինը հանել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Ֆինանսական վարչության կառուցվածքից և նրան տալ քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային առանձին ստորաբաժանման՝ բաժնի կարգավիճակ: Երևանի քաղաքապետարանում առայժմ ստեղծված չէ ներքին աուդիտի կոմիտե՝ ներքին աուդիտի ոլորտի իրավական դաշտի ոչ ամբողջականության պատճառով:
- Ուսումնասիրելով Երևանի ավագանու մինչև հիմա կայացած նիստերի արձանագրությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ ավագանու մշտական հանձնաժողովների վերահսկողությունը բյուջեի կատարման նկատմամբ առայժմ հիմնականում կրում է ձևական բնույթ հետևյալ պատճառներով՝
  - ✓ ավագանու նիստերի օրակարգերում բացակայում են նրա մշտական հանձնաժողովների կողմից ներկայացված այնպիսի հարցերը, որոնք վերաբերում են բյուջեի կատարման վերաբերյալ որոշակի ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացմանը և ավագանու կողմից դրա քննարկմանը;
  - ✓ Երևանի պաշտոնական համացանցային կայքում բացակայում է որևէ տեղեկատվություն Երևանի ավագանու խմբակցությունների և մշտական հանձնաժողովների գործունեության (անցկացրած նիստերում քննարկված հարցերի, դրանց վերաբերյալ կայացրած որոշումների, քաղաքապետի կողմից ներկայացված ավագանու որոշման նախագծերի վերաբերյալ տված եզրակացությունների ու տեղեկանքների, քաղաքապետարանի կողմից կատարված աշխատանքների նկատմամբ նրանց կատարած ուսումնասիրությունների արդյունքների, ավագանու քննարկմանը նրանց ներկայացրած հարցերի և այլնի) վերաբերյալ:

Այս բացը որոշ չափով լրացվում է Երևանի ավագանու յուրաքանչյուր նստաշրջանի ընթացքում պարբերաբար տեղի ունեցող Երևանի ավագանի—քաղաքապետարան բանավոր «հարց—պատասխան» գործընթացների սղագրություններով, որոնք որոշակիորեն դրական ազդեցություն են ունենում

Երևանի քաղաքապետարանի գործունեության, մասնավորապես, Երևանի բյուջեի կատարման և վերահսկման արդյունավետության բարձրացման վրա:

- Երևանի ավագանին, որևէ կոնկրետ հարցի կամ բյուջեով նախատեսված աշխատանքի կատարման արդյունավետության և որակի ուսումնասիրման նպատակով, չի ստեղծել որևէ ժամանակավոր հանձնաժողով, իսկ ավագանու որևէ խմբակցություն, Երևանում տեղական ինքնակառավարմանը վերաբերող, հասարակական հետաքրքրություն ներկայացնող փաստեր պարզելու նպատակով, չի նախաձեռնել և չի ստեղծել որևէ ժամանակավոր քննող հանձնաժողով: Հետևաբար, Երևանի ավագանու՝ օրենքով սահմանված վերահսկողության այս ձևերը գործնականում առայժմ կիրառություն չեն գտել:
- Երևանի քաղաքապետն ավագանու քննարկմանը և հաստատմանը ներկայացրել է Երևանի 2009թ. և 2010թ. բյուջեների կատարման միայն տարեկան հաշվետվություններ, և ավագանուն չի ներկայացրել հաղորդումներ այդ բյուջեների եռամսյա կատարման ընթացքի վերաբերյալ՝ հակառակ ՀՀ բյուջետային օրենսդրությամբ և Երևանի ավագանու կանոնակարգով սահմանված հստակ պահանջների: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում բաց է թողնված Երևանի քաղաքապետի կողմից ավագանուն բյուջեի եռամսյա կատարման մասին հաղորդումներ ներկայացնելու մասին դրույթը:
- Երևան քաղաքի 2009թ. և 2010թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով, Երևանի ավագանու համապատասխան որոշումներով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, հաստատվել է ձեռք բերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը և ձեռք է բերվել աուդիտորական ծառայություններ, որոնք մատուցվել են «Ֆինտելս աուդիտ» ՓԲԸ կողմից: Վերջինս, իր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա, Երևանի ավագանուն և քաղաքապետին ներկայացրել է դրական եզրակացություններ: Օրենքի պահանջներին համապատասխան, Երևանի 2009թ. և 2010թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները քննարկվել և հաստատվել են Երևանի ավագանու համապատասխան որոշումներով՝ հաշվի առնելով նաև անկախ աուդիտորի ուսումնասիրությունների արդյունքները և դրական եզրակացությունները:
- «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ ներկայացուցչի մաս-

նակցությամբ և դիտարկումներով, Երևանի ավագանու նիստում Երևանի 2010թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկումն ու հաստատումը հիմնականում կրել է ձևական բնույթ, հետևյալ պատճառներով՝

- ✓ օրակարգային հարցի հիմնական զեկուցողի ելույթը տևել է չափազանց կարճ՝ ներկայացնելով բյուջեի կատարման միայն թվային մասը կամ ֆինանսական կողմը, և չներկայացնելով բյուջեի կատարման վերլուծական մասը կամ բյուջեով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքները;
  - ✓ հարակից զեկույցներով հանդես չեն եկել ավագանու ոչ Ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը և ոչ էլ մյուս մշտական հանձնաժողովները;
  - ✓ ավագանու անդամները չեն տվել ոչ մի հարց հիմնական զեկուցողին;
  - ✓ ավագանու նիստին չի հրավիրվել Երևանի 2010թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն աուղիտ անցկացրած «Ֆինտեխ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը և ավագանու անդամները հնարավորություն չեն ունեցել հարցեր ուղղելու անկախ աուղիտորի կատարած ուսումնասիրության արդյունքների և եզրակացության վերաբերյալ;
  - ✓ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատվել է միաձայն՝ ավագանու ոչ մի անդամ չի քվեարկել «դեմ» կամ «ձեռնպահ»:
- ՀՀ կառավարությունը (ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության կառուցվածքում առանձնացված ստորաբաժանման՝ ֆինանսական վերահսկողության տեսչության) և ՀՀ վերահսկիչ պալատն առայժմ ստուգումներ կամ ուսումնասիրություններ չեն իրականացրել Երևան քաղաքի 2010-2011թթ. բյուջեների կատարման վերաբերյալ:
  - Երևանի իրավական ակտերի տեղեկագրերում հրապարակվել են Երևանի 2009թ. և 2010թ. բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների միայն թվային մասերը, իսկ թե՛ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմվու<sup>մ</sup> է արդյոք բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների վերլուծական մասերը, պարզ չէ, քանի որ նման տեղեկատվություն չի տրամադրվել ոչ ավագանու նիստերում, ոչ Երևանի իրավական ակտերի տեղեկագրերում և ոչ էլ Երևանի պաշտոնական համացանցային կայքում:
  - Երևանի 2010թ. և 2011թ. բյուջեների նախագծերը տեղադրվել են Երևանի պաշտոնական համացանցային կայքում, որի շնորհիվ Երևանի

քաղաքացիները, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտները, շահագրգիռ այլ անձինք հնարավորություն ունեցել են ծանոթանալու բյուջեների նախագծերին և դրանց վերաբերյալ Երևանի քաղաքապետարան ներկայացնելու իրենց կարծիքները, դիտողությունները և առաջարկությունները: Սակայն, Երևանի 2010թ. և 2011թ. բյուջետային գործընթացների շրջանակներում, բյուջեների նախագծերի վերաբերյալ հանրային լուսմներ կամ քննարկումներ չեն կազմակերպվել ո՛չ Երևանի ավագանու, ո՛չ նրա խմբակցությունների ու մշտական հանձնաժողովների և ո՛չ էլ Երևանի քաղաքապետարանի կողմից: Առաջարկվում է Երևանի բյուջեի նախագծի շուրջ հանրային լուսմներ կամ քննարկումներ կազմակերպել ըստ Երևանի վարչական շրջանների՝ Երևանի ավագանու անդամների, քաղաքացիների, հասարակական և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

- Երևանի ավագանու հաստատումից հետո, Երևանի 2010թ. և 2011թ. բյուջեները հրապարակվել են պարբերաբար հրատարակվող Երևանի իրավական ակտերի տեղեկագրերում: Սակայն, Երևանի 2010թ. և 2011թ. բյուջեների վերաբերյալ հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուների ու գրքույկների պատրաստման և հրապարակման մասին տեղեկատվություն մեզ հայտնի չէ:
- Երևանի քաղաքապետարանը չի հրապարակում տեղեկատվություն բյուջեի եռամսյա կատարման մասին ոչ տեղական մամուլում և ոչ էլ Երևանի պաշտոնական համացանցային կայքում:
- Քանի որ Երևանի քաղաքապետարանը չունի տեղական մամուլ, Երևանի հանրությունը փաստորեն զրկված է Երևանի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը ծանոթանալու հնարավորությունից: Դրան մասամբ փոխլրացնում է այն, որ այդ հաշվետվությունը հրատարակվում է Երևանի իրավական ակտերի տեղեկագրում և տեղադրվում է Երևանի պաշտոնական համացանցային կայքում, որոնցից, սակայն, օգտվում են սահմանափակ թվով մարդիկ՝ հիմնականում պաշտոնյաներ, մասնագետներ կամ փորձագետներ:

### **2.3. Երևանի 2009-2010թթ. ֆինանսական վերլուծության արդյունքները**

Երևանի 2009-2011թթ. ֆինանսական վերլուծության հիմնական եզրակացություններն ու առաջարկություններն են՝

- Երևանի բյուջեի տեսակարար կշիռը ՀՀ համախմբված բյուջեում եկամուտների գծով կազմել է՝ 2009թ.՝ 2.8%, և 2010թ.՝ 6.1%, իսկ ծախսերի գծով՝ 2009թ.՝ 1.9%, և 2010թ.՝ 4.9%:
- Երևանի բյուջեի ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ ՀՆԱ-ում կազմել է՝ 2009թ.՝ 0.6%, և 2010թ.՝ 1.4%:
- Երևան քաղաքի 2009թ. բյուջեի փաստացի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՀ բոլոր համայնքների 2009թ. բյուջեների փաստացի ընդհանուր եկամուտների հանրագումարի 37.3%-ը, իսկ Երևան համայնքի 2010թ. միասնական բյուջեի փաստացի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՀ բոլոր համայնքների 2010թ. բյուջեների փաստացի ընդհանուր եկամուտների հանրագումարի 57.4%-ը: Ծախսերի դեպքում, այս ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 2009թ.՝ 36% և 2010թ.՝ 58%: Ե՛վ Երևան քաղաքի, և՛ ՀՀ բոլոր համայնքների 2010թ. բյուջետային ցուցանիշների նման կտրուկ թռիչքը, 2009-ի համեմատ, հիմնականում պայմանավորված է 2010-ին հանրակրթության ոլորտում պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման բյուջետային տվյալների ներառմամբ Երևանի (որպես միասնական մեկ համայնքի) բյուջեում, հետևապես նաև՝ ՀՀ բոլոր համայնքների բյուջեների հանրագումարում:
- Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով 2009թ. 17,672 ՀՀ դրամից (մոտ 49 ԱՄՆ դոլարից) 2010-ին հասել է 43,691 դրամի (մոտ 117 դոլարի): Համապատասխանաբար, Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով 2009թ. 15,974 դրամից (մոտ 44 դոլարից) 2010-ին աճել է՝ հասնելով 42,889 դրամի (մոտ 115 դոլարի): Երևանի 2010թ. բյուջեի՝ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտը և ծախսը մոտ 1.7 անգամ գերազանցում է ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանը) 2010թ. բյուջեների հանրագումարում նույն ցուցանիշին:
- Երևանի բյուջեի սեփական եկամուտները (հարկերը, տուրքերը և այլ եկամուտները, ներառյալ՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները) ընդհանուր եկամուտների մեջ

փաստացի կազմել են համապատասխանաբար 2009թ.՝ 52.4% և 2010թ.՝ 67.6%, իսկ 2011-ին դրանք նախատեսվել են 72.2%: 2009-ի համեմատ, 2010-ին Երևանի բյուջեի սեփական եկամուտները զգալիորեն ավելացել են ի հաշիվ Երևանի ՏԻՄ-երի պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների, որոնց տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ 2010-ին կազմել է 42.8%՝ 2009-ի 1.3%-ի դիմաց:

- Երևանի 2009-2010թթ. բյուջեներում էականորեն բարելավվել են հողի հարկի և գույքահարկի գծով պլանավորված եկամուտների գանձման մակարդակը (2009թ.՝ հողի հարկ՝ 80.2%, և գույքահարկ՝ 114.8%, 2010թ.՝ հողի հարկ՝ 90.4%, և գույքահարկ՝ 101.5%): Սակայն, Երևանում հողի հարկի և գույքահարկի տվյալների բազաներում դեռևս առկա են տարաբնույթ անճշտություններ և թերություններ, որոնք բավականին խոչընդոտում են հողի հարկի և գույքահարկի գծով եկամուտների արդյունավետ գանձմանը, և այդ ուղղությամբ Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներից ապագայում ևս կպահանջվի որոշակի ջանք և հետևողական աշխատանք:
- Երևանի 2010թ. բյուջեում, 2009-ի համեմատ, մոտ 61%-ով աճել են տեղական տուրքերի գծով փաստացի եկամուտները՝ 2009-ին 1,035.7 մլն դրամից (տեսակարար կշիռը՝ 5.3%, գանձման մակարդակը՝ 89.4%) 2010-ին հասնելով 1,666.2 մլն դրամի (տեսակարար կշիռը՝ 3.4%, գանձման մակարդակը՝ 122.2%):
- Չնայած Երևանի 2010թ. բյուջեում, 2009-ի համեմատ, պաշտոնական դրամաշնորհները բացարձակ արժեքով աճել են մոտ 6.5 մլրդ դրամով՝ կազմելով մոտ 15.8 մլրդ դրամ, դրանց տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ զգալիորեն նվազել է՝ կազմելով 32.4% (2009թ.՝ 47.4%), այդ թվում՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ՝ 18.6%, և պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ՝ 13.7% (ընթացիկ սուբվենցիաներ՝ 11.0%, և կապիտալ սուբվենցիաներ՝ 2.7%):
- Չնայած 2010-ին, 2009-ի համեմատ, Երևանի բյուջեի ծախսային համարյա բոլոր ուղղություններով զգալի աճ է արձանագրվել, 2010թ. բյուջեի ընդհանուր ծախսերում 1.5-2.5 անգամ նվազել են ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, շրջակա միջավայրի պաշտպանության (աղբահանում, կեղտաջրերի հեռացում, շրջակա միջավայրի աղ-



տոտման դեմ պայքար և այլն), հանգիստ, մշակույթ և կրոնի, սոցիալական պաշտպանության ոլորտների և հիմնական խմբերին չդասվող պահուստային ֆոնդերի ծախսերի տեսակարար կշիռները: Դրան զուգահեռ, Երևանի 2010թ. բյուջեում, 2009-ի համեմատ, զգալիորեն աճել են կրթության (2009թ.՝ 32.9%, 2010թ.՝ 44.2%), առողջապահության, տնտեսական հարաբերությունների ոլորտների, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների (բնակարանային շինարարություն, ջրամատակարարում, փողոցների լուսավորում, համայնքային զարգացում և այլն) ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում:

- Պաշտպանության, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեության, գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդության, լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարության ոլորտներում Երևանի ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման ընդհանուր ֆինանսավորման չափը չի գերազանցում 1%-ը:
- Երևանի 2009-2010թթ. բյուջեներում ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում կազմել են համապատասխանաբար 94.7% և 91.7%, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում՝ համապատասխանաբար 8.1% և 32.3%: Երևանի 2010թ. բյուջեում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը կտրուկ ցատկը հիմնականում պայմանավորված է եղել Երևանի սեփականություն համարվող գույքի (11.4%) և հողերի (12.7%) օտարումների գծով մուտքերի հաշվին կատարված կապիտալ ծախսերի:
- 2009-ի համեմատ, 2010-ին մոտ 3 անգամ նվազել են Երևանի քաղաքապետարանի, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերի մեջ՝ 5.9%, սոցիալական ապահովության վճարների փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերի մեջ՝ 1.0%, իսկ նշված երկուսը միասին՝ 6.9%, որոնք ավելի քան 3 անգամ ցածր են նաև ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանը) 2010թ. բյուջեների հանրագումարում հաշվարկված մույն ցուցանիշներից (համապատասխանաբար 17.8%, 3.6% և 21.4%): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2011թ. ապրիլի 1-ից Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների աշխատա-

կազմերի համայնքային ծառայողների և այլ աշխատողների աշխատավարձերը բարձրացվել են՝ յուրաքանչյուր աշխատողին միջին հաշվով 50.0 հազ. դրամով, Երևանի 2011թ. բյուջեի ընդհանուր ծախսերում կաճ են դրանց և սոցիալական ապահովության վճարների գծով ծախսերի տեսակարար կշիռները, հետևաբար անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ օպտիմալացնելու Երևանում համայնքային աշխատողների թվաքանակը և աշխատավարձերի ու սոցիալական ապահովության վճարների գծով կատարվող ծախսերից խնայված գումարներն ուղղելու բյուջետային ծախսային այլ կարիքներին:

- Երևանի 2010թ. բյուջեի ընդհանուր ծախսերում բարձր տեսակարար կշիռ ունեցել են ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերը (50.1%)՝ պայմանավորված հիմնականում Երևանի քաղաքապետարանին կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում ենթակամ ենթ կազմակերպությունների պահպանման, շահագործման և նորոգման ծախսեր կատարելու հանգամանքով, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (32.3%), սուբսիդիաները (17.4%), դրամաշնորհները (3.8%) և այլ ծախսերը (13.4%): Ոչ ֆինանսական ակտիվների գծով կամ կապիտալ ծախսերը կատարվել են հիմնականում հիմնական միջոցների ուղղությամբ՝ շենքերի և շինությունների կառուցում (11.7%) և կապիտալ վերանորոգում (18.8%), մեքենաներ և սարքավորումներ (1.1%) և այլ հիմնական միջոցներ (0.7%):

## Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն
2. Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիա
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը
4. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը
5. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը
6. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը
7. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը
8. «Հարկերի մասին» ՀՀ օրենքը
9. «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը
10. «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը
11. «Հողի հարկի արտոնությունների մասին» ՀՀ օրենքը
12. «Գումունների մասին» ՀՀ օրենքը
13. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը
14. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը
15. «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը
16. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքը
17. ՀՀ վարչապետի 2008թ. դեկտեմբերի 17-ի հ. 1033-Ն որոշում
18. ՀՀ ֆինանսների նախարարի 2008թ. օգոստոսի 15-ի հ. 730-Ն հրաման
19. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008թ. փետրվարի 4-ի հ. 80-Ն հրաման
20. Երևան քաղաքի ավագանու կանոնակարգ
21. Երևան քաղաքի ավագանու որոշումներ
22. Երևան քաղաքի ավագանու խմբակցությունների կանոնադրություններ
23. Երևան քաղաքի ավագանու մշտական հանձնաժողովների կանոնակարգեր
24. Երևան քաղաքի զարգացման 2010-2013թթ. քառամյա ծրագիր
25. Երևան քաղաքի զարգացման 2010թ. ծրագիր
26. Երևան քաղաքի 2010թ. բյուջե
27. Երևան քաղաքի զարգացման 2011թ. ծրագիր
28. Երևան քաղաքի 2011թ. բյուջե
29. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. գիրք 2, (2004-2006թթ.), Գ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, 2008
30. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. գիրք

- 3, (2007 և 2008թթ.), Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, 2009
31. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում. գիրք 4, (2009 և 2010թթ.), Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, 2011
